ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբեր 2023, № 3.3

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՄԲԻՈՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ԼՐԱՄՇԱԿՎԱԾ) ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՇՊՀ գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ամբիոնի օրինակելի կանոնադրության մեջ ներկայացված լրացումը (կցված է):

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ե. ՍԵՐՈԲՅԱՆ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ամբիոնի օրինակելի կանոնադրությունում (Նոր խմբագրությամբ, հաստատված ՇՊՀ–ի Գիտական խորհրդի 2023թ. հուլիսի 11–ի նիստում) լրացման առաջարկ

2.14 Գործողը՝

Մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը ամբիոնի վարիչը ՄԿԾ-ի պատասխանատուի թեկնածությունը քննարկում է ՇՊՀ-ի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի հետ: ՇՊՀ-ի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենը ՄԿԾ-ի պատասխանատուի թեկնածությունը ներկայացնում է բուհի ռեկտորի հաստատմանն ու հրամանագրմանը:

2.14 Լրացման առաջարկը.

Մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը ամբիոնի վարիչը ՄԿԾ-ի պատասխանատուի թեկնածությունը քննարկում է ՇՊՀ-ի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի հետ: *Ըստ անհրաժեշտության՝ ՄԿԾ–ի պատասխանատու կարող է լինել նաև վերոնշյալ պայմաններին չբավարարող ՇՊՀ-ի այն աշխատակիցը, ում թեկնածությունը ամբիոնի վարիչի ներկայացմամբ և հիմնավորմամբ քննարկվում և հաստատվում է ռեկտորատի նիստում:* ՇՊՀ-ի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենը ՄԿԾ-ի պատասխանատուի թեկնածությունը ներկայացնում է բուհի ռեկտորի հաստատմանն ու հրամանագրմանը: